Կ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑԻՆ ԵՎ ՀԱՅԵՐԸ

(Կապադովկյան գործունեության շրջան)

Հնագույն ժամանակներից ի վեր Կապադովկյան Կեսարիայի եկեղեցին վճռական նշանակություն է ունեցել հայոց եկեղեցու և վանականության սկզբնավորման հարցում[1]։ Հայոց հայրապետը՝ Գրիգոր Լուսավորիչը, ուսանել է Կեսարիայում, այնտեղ էլ ստացել իր ձեռնադրությունը։ «Եւ եղեալ ժողով բազմութեան եպիսկոպոսաց ի քաղաքն Կեսարացւոց, զի ձեռնադրեսցեն զսուրբն Գրիգորիոս և աւանդեալ ի նա զպատիւ խոնարհութեան քահանայութեանն Քրիստոսի, և զբարձրութիւն եպիսկոպոսութեան փառաւորութեանն Աստուծոյ, զպատիւն և զփառսն մեծ»[2]։

Գրիգոր Լուսավորիչից սկսած՝ նրա կաթողիկոսության տան բոլոր անդամները ուսանել են Կեսարիայի դպրոցներում և առաջին անգամ այնտեղ մոտիկից հաղորդակից դարձել վանական կյանքի կառուցվածքին ու եկեղեցու հաստատությանը։ Կապադովկյան Կեսարիայի եկեղեցին նախատիպ ընդունելով՝ հետագայում նրանք ձեռնարկեցին հայոց եկեղեցու ու վանականության հիմնադրման գործը։ Հոգուտ ասվածի է խոսում նաև Բարսեղ Կեսարացու ժամանակաշրջանի հայ-հունական եկեղեցական փոխառնչությունների պատմությունը։

Գրիգոր Լուսավորիչից հետո հայոց եկեղեցուն մեծ երախտիք մատուցեց Ներսես Մեծը։ Նա Բարսեղ Կեսարացու ժամանակակիցն էր՝ ծնված մոտավորապես 334 թվականին։ Ներսեսը «սնաւ և ուսաւ ի Կեսարիացւոց գաւառին...»[3], որտեղ և առաջին անգամ մոտիկից հաղորդակից դարձավ քրիստոնեացման շրջանի եկեղեցու բնույթին ու վանական դասի կենցաղին։ Հայաստան վերադառնալուց հետո, հակառակ իր իսկ համառ ընդդիմացումներին, Ներսեսին և նրան ուղեկցող շքախմբին ժողովրդի ցանկությամբ ու Արշակ թագավորի հրամանով, ինչպես գրում է Բուզանդ պատմագիրը, «...արձակեցին բազում ընծայիւք և մեծամեծ պատարագօք և հաւատարիմ հրովարտակօք առ կաթողիկոսաց կաթողիկոսն Եւսեբիոս յերկիրն Գամրաց, և ի մայր քաղաքացն Նոցա ի Կեսարիա, զի ձեռնադրեսցեն անդ զսուրբն Ներսէս ի կաթողիկոսութիւն Հայոց մեծաց»[4]։ Այնուհետև պատմագիրը ավելացնում է. «Իսկ իբրեւ եհաս ժամ՝ յորժամ կամեցան զՆերսէս ձեռնադրել, վերացաւ աղաւնին ի սրբոյն Բարսեղէ, և

---

1 Տե՛ս Յ. Թ ո փ չ ե ա ն, Ծագումն հայ վանականութեան («Լոյս», 1905, N 15, էջ 360—361)։

2 Ագաթանգեղայ Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1914, էջ 408—409։

3 Պատմութիւն սրբոյն Ներսիսի Պարթեւի հայոց հայրապետի (տե՛ս Սոփերք Հայկականք, Զ, ի Վենետիկ, 1853, էջ 14)։

4 Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն հայոց, Վենետիկ, 1933, էջ 81 (այսուհետև՝ Փ. Բուզանդ)։

նստաւ ի վերայ գլխոյն Ներսէսի»[5]։ Այն ժամանակ Բարսեղ Կեսարացին Եվսեբիոս եպիսկոպոսի տեղապահն էր և իր հիմնած վանքերի ու բազմաթիվ բարեգործական հաստատությունների շնորհիվ ուներ մեծ ժողովրդականություն։ Բուզանդի գրառած աղավնու միջադեպը, անտարակույս, զերծ չէ առասպելախառն տարրերից, դա միաժամանակ երևում է պատմագրի արած «սքանչելիք և նշանք յԱստուծոյ...» բնորոշումից, որը հատուկ է առասպելների վիպական վերապատմանը։ Նման պարագայում այն ունի հայ-հունական եկեղեցական խաղաղ հարաբերությունն ակնարկող հիմք և հեռու է հավուր պատշաճի հորինվածք լինելուց։ Բացի այդ, աղավնու միջադեպը մասնավորապես ուղղակի ակնարկ պետք է ընդունել Բարսեղ Կեսարացու և Ներսեսի հոգևոր գործունեության ընդհանրության ու ժողովրդայնության։ Դա առավել որոշակի է դառնում, երբ քննում ենք Ներսես Մեծի հայոց մեջ ծավալած հոգևոր գործունեությունը։

Ներսեսը սկզբնական շրջանում հանդես է գալիս Բարսեղի հոգևոր ձեռնարկումների բացահայտ ընդօրինակմամբ. ստեղծում է բազմաթիվ վանական-բարեգործական հաստատություններ (ծերանոցներ, կուսանոցներ, աղքատանոցներ, հյուրանոցներ, հիվանդանոցներ, որբանոցներ, այրիանոցներ և այլն), որոնց էությանը մոտիկից հաղորդակից էր եղել Կեսարիայում։ Այս առումով կարևոր է Մ. Խորենացու մի հաղորդումը. «Եւ ի Բիւզանդիոյ դարձեալ ի Կեսարիայ, և եկեալ ի Հայս՝ զամենայն կարգս ուղղութեան հարցն իւրոց նորոգեաց, այլ և առավել ևս, քանզի զբարեկարգութիւնն զոր ետես ի Յունաց աշխարհին, մանաւանդ ի Թագաւորեալ քաղաքին, ի սմա նկարագրէ»[6]։ Խորենացին «Թագաւորեալ քաղաք» արտահայտության տակ ի նկատի ունի Կապադովկյան Կեսարիան։

Ներսեսը, պետք է ենթադրել, հենց քրիստոնեության վերջնական տարածման ու Հայաստանում հաստատման ճանապարհին ծառացած դժվարությունների դեմ պայքարի միջոցների քննության առիթով գումարեց առաջին եկեղեցական ժողովը։ Փավստոս Բուզանդը գրում է. «Ժողովեցան ի գեւղն Աշտիշատ, ուր զառաջինն զեկեղեցին էր շինեալ. զի նա էր մայր եկեղեցեացն, և տեղի լեալ նախնեացն ժողովոց սիւնհոդոսին։ Ի ժողով հաւանութիւնս եկեալ ամենեցուն, և խորհուրդ բարեաց ի մէջ արկանէին, կատարել անդ զաշխարհական կարգս եկեղեցւոյն և ժողովն հաւատոցն հաւասարութեան։ Յայնմ ժամանակի կարգեցին կազմեցին կանոնեցին յօրինեցին, և արարին զամենայն ժողովուրդս երկրին Հայոց իբրեւ կարգ միաբանութեան վանականաց համաշխարհի, բայց միայն յամուսնութեան օրինացն։ Բայց միայն զառաքելակարգ կանոնսն ի վերայ ամենեցուն կացուցանէր սուրբ եպիսկոպոսապետն Ներսէս...»[7]։

Պատմագիրը, ինչպես տեսնում ենք, Բարսեղ Կեսարացու անունը չի տալիս, սակայն պետք է ենթադրել, որ այդ ժողովում Ներսեսի նախաձեռնությամբ քննվել, վերանայվել է Բարսեղ Կեսարացու՝ եկեղեցական բազմաթիվ միջոցառումներն ու կանոնները հայոց եկեղեցու վրա տարածելու հարցը։

---

5 Փ. Բ ու զ ա ն դ, էջ 82։ Սոփերք Հայկականք, Զ, Վենետիկ, 1853, էջ 28։

6 Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն հայոց, աշխատ. Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, էջ 279։ (Այսուհետև՝ Մ. Խորենացի)։

7 Փ. Բ ու զ ա ն դ, էջ 84։

Փավստոս Բուզանդը, որ վիպական պատկերներով է ներկայացնում Ներսեսի վարքը, հայոց նորաստեղծ եկեղեցու ու նրա առաջնորդի, այսպես կոչված, շահերից ելնելով՝ հիշյալ կանոնների հեղինակի անունը չի տալիս։ Բայց նրա՝ «զառաքելակարգ կանոնսն» արտահայտությունը, անկասկած, առաջին հերթին Բարսեղի կանոններին է վերաբերում։

Եկեղեցական կանոնների խստագույն անհրաժեշտությունը IV դարում պայմանավորված էր վանական կյանքի աննախադեպ ծաղկմամբ։

Վանական կյանքի հիմնադիրն ու զարգացնողը մեզանում Ներսես Մեծը եղավ։ Նա Մեծ Հայքում բազմաթիվ վանքեր հիմնեց՝ դրանք բնակեցնելով վանականների ստվար բազմությամբ։ Սակայն հետաքրքրականն այն է, որ ինչպես Բարսեղ Կեսարացին Կապադովկյան Կեսարիայում, այնպես էլ Ներսես Մեծը Հայքում նախապես երկյուղ էր կրում վանական պորտաբույծ, անաշխատ կյանքի տարածման նկատմամբ, որի համար էլ բազմաթիվ պատժամիջոցներ սահմանեց։ Ի վերջո՝ նա կարողացավ հասնել այն բանին, որ «...եղեւ խաղաղութիւն և նորոգութիւն յաւուրս նորա. ամենայն եկեղեցեաց, և յաճախէր շուք պատուի ամենայն եպիսկոպոսացն ընդ ամենայն տեղիս Հայոց մեծաց։ Եւ լուսաւորութիւն կարգի եկեղեցւոյ ամենապայծառ ծաղկեաց ամենամեծ լիութեամբ. կարգեցան կարգք կաթողիկէ եկեղեցեաց ամենայն վայելչութեամբ, և բազմացան կարգք սրբութեան պաշտամանցն, և պաշտօնէիցն յաճախութիւն։ Եւ բազմացոյց զկարգս եկեղեցեաց ի շէնս և յանշէնս, սոյն օրինակ բազմութիւնք կրօնաւորաց»[8]։ Բարսեղ Կեսարացու վանական գործունեությունը հիշեցնող այս հատվածը խոսում է հոգուտ Կեսարիայի թեմի առաջնորդի և Ներսեսի հոգևոր ձեռնարկումների ընդհանրության, որոնք մեծ դեր խաղացին քրիստոնեությունը Հայաստանում հաստատելու դժվարին գործում։

Հայոց Ներսես կաթողիկոսի և Բարսեղ Կեսարացու հայացքների ընդհանրության լավագույն գրավականն է արիոսականության դեմ մղած նրանց համատեղ պայքարը։ Հայտնի է, որ 325 թ. գումարված Նիկիայի առաջին տիեզերական ժողովի դատապարտումից հետո էլ արիոսականությունը շարունակեց տարածվել Արևելքում։ Հունաց Վաղես կայսրը այդ աղանդի երկրպագուներից էր։ Արդ՝ Բարսեղ Կեսարացու թղթերից մեկը՝ գրված 372 թվականին իտալացի և գաղղիացի եպիսկոպոսներին, կարևոր է երկու նկատառումով։ Նախ՝ նրանում հստակ շարադրված են հեղինակի մտքերը եկեղեցու դերի ու նշանակության, դրան զուգահեռ՝ արիոսականության սպառնացող վտանգների մասին։ Ապա, որ ամենակարևորն է՝ հեղինակին համակարծիք 31 եպիսկոպոսներից երեքը, ինչպես պետք է ենթադրել անուններից, հայեր են։ Այսպես՝ Եվսեբիոս, Վարսումա, Հովան անունների կողքին կարդում ենք՝ Խոսրով, Հուսիկ, Ներսես...»։

Ուսումնասիրողներից Վ. Հացունին գտնում է, որ «Յիշեալ Ներսէսդ անկասկած մեր ծանօթ կաթողիկոսն է, և ինք միայն կրնայ լինել, որովհետև այդ անունը մեր քով Դ դարու մէջ միակն է, և չենք տեսներ ուրիշ ոչ մէկ աշխարհականի կամ եկեղեցականի վրայ»[10]։

---

8 Փ. Բուզանդ, էջ 86։

9 Տե՛ս Творения иже во святых отца нашего Василия Великого, архиепископа Кесарии Каппадокийская, часть VI, Москва, 1892, стр. 197. (Այսուհետև՝ В. Великий).

10 Վ. Հացունի, Արքեպիսկոպոսութիւն եւ մետրապոլտութիւն Հայոց մէջ (տե՛ս «Բազմավէպ», 1926, № 5, էջ 134)։

Եթե անգամ մեր պատմագիրները հիշատակած լինեին Ներսես անունով վաղ շրջանի այլ հոգևոր գործիչների ևս, միևնույն է՝ Բարսեղ Կեսարացու վերոնշյալ թղթում հիշված Ներսեսը պետք էր նույնացնել հայոց կաթողիկոս Ներսես Մեծի հետ, քանի որ ա) IV դարի հայոց եկեղեցու ամենանշանավոր դեմքը Ներսես Մեծն է, որի կաթողիկոսության տարիներին անհամեմատ բարձրացավ հայոց եկեղեցու հեղինակությունը նույնադավան ժողովուրդների շրջանում. բ) Բարսեղ Կեսարացու Փոքր Հայքի եպիսկոպոսների հետ ունեցած բազմաթիվ թղթակցությունները, Ներսես Մեծի՝ Բարսեղ Կեսարացու նորամուծությունների ընդօրինակումը Հայաստանում ինքնին վկայում են հայ-հունական եկեղեցական խաղաղ հարաբերությունների մասին, որի ժամանակ Բարսեղը միշտ էլ կարևորություն է տվել հատկապես դավանանքի հարցերում հայոց եկեղեցու հետ համակարծիք լինելուն։ Նման պարագայում ինքնին հասկանալի է դավանանքի խնդրին վերաբերող թղթի տակ հայոց կաթողիկոսի, ինչպես նաև հայազգի եպիսկոպոսների անունների առկայությունը։

Մ. Խորենացին չի նշում Ներսեսի կաթողիկոսության սահմանները, Փ. Բուզանդը հակառակը՝ հաճախ է կրկնում «Մեծ Հայք» պատմական անվանումը[11]։ Բայց պատմական Հայաստանի մասն էր կազմում նաև Փոքր Հայքը։

Պրոկոպիոս Կեսարացու վկայությամբ Փոքր Հայքի մայրաքաղաք Մելիտինեն այնպես մեծացավ և բազմամարդ եղավ, որ քաղաքի ներսում այլևս կառուցելն անհնարին դարձավ[12]։

Արդ՝ նման պայմաններում ի՞նչ էր կատարվում հոգևոր կյանքի՝ դավանանքի նախընտրության բնագավառում, այլ կերպ ասած. ո՞վ էր տնօրինում քրիստոնեա-եկեղեցական հարաբերությունների վերջնական ձևավորումն ու ընթացքը Փոքր Հայքում։

Բանասեր Ա. Սուքրյանը գրում է. «Հօն (իմա՝ Փոքր Հայքում) Սուրբ Ներսիսի իշխանութիւնն չէր հասներ, այլ հպատակեալ էին սրբոյն Բարսղի, ինչպէս Սատաղ, Սեբաստիա և Գաղթականութիւն Հայոց (Κολωνεια Ἀρμενίας)...»[13]։ Եվ իրոք, Բարսեղ Կեսարացու Կապադովկյան շրջանի եկեղեցական գործունեության քննությունը ցույց է տալիս, որ Փոքր Հայքը հոգևոր ամենասերտ կապի մեջ է եղել Կեսարիայի եկեղեցու հետ։ Սեբաստիան, Սատաղիան, Նիկոպոլիսը և գաղթականություն կամ Գաղութք Հայոցը հնում հայտնի էին՝ «Չորեքքաղաքեան Հայք» (Τετραπολις Ἀρμενιας) անվանմամբ։ Այս քաղաքների եպիսկոպոսները հունական դպրոցներում կրթված հայեր էին, բայց կրում էին զանազան հունական անուններ[14]։

Փոքր Հայքի եկեղեցա-դավանաբանական որևէ հարց չի լուծվել առանց Բարսեղ Կեսարացու անմիջական միջամտության։ Նա առանձնապես խստապահանջ է եղել հայ նորընտիր եպիսկոպոսների լեզվական կուլտուրայի, ընդհանուր պատրաստվածության և իր ժողովրդի մշակույթի իմացության խնդրում։

---

11 Փ. Բուզանդ, էջ 81, 86 եև։

12 Прокопий. О постройках, перевод С. П. Кондратьева. (Տե՛ս ВДИ, Москва, 1939, № 4 (9), стр. 246).

13 Ա. Սուքրեան, Մեծն Ներսէս Պարթև (տե՛ս «Բազմավէպ», հատոր Լե, Վենետիկ, 1877, էջ 326)։

14 Տե՛ս Յ. Թորոսեան, Հ. Արսեն Սուքրի («Բազմավէպ», 1932, № 8—9, էջ 352)։

Պատմական Հայաստանի վերոնշյալ գավառները՝ կտրված լինելով Մեծ Հայքի մշակութային-կրթական կենտրոններից, ուր եկեղեցական արարողությունը, անտարակույս, կատարվում էր հայոց լեզվով, հեշտությամբ կարող էին զրկվել մայրենի լեզվով հաղորդակցելու հնարավորությունից։ Նման պարագայում դրան ինչ-որ չափով կարող էր նպաստել նաև Կեսարիայի հոգևոր թեմը, որի ենթակայության տակ էին նրանք։ Սակայն Բարսեղ Կեսարացին ոչ միայն չի ընդդիմացել մայրենի լեզվով հաղորդակցվելու մտքին, այլև, ինչպես երևում է 372 թվականին գրած մի թղթից, ջանացել է, որ այս կամ այն հայկական գավառի եպիսկոպոս ընտրվի հայերենին քաջահմուտ անձ[15]։ Հ. Մարկվարտը այս առթիվ նկատում է. «Բոլոր մետրոպոլիտները չէ՞, որ կարող էին նույնքան խելացի գտնվել, որքան որ էր մեծն Բարսեղը, որն ուշադրություն դարձրեց, որպեսզի Փոքր Հայքի եպիսկոպոսական աթոռների համար ընտրվեին հայերենին քաջահմուտ մարդիկ»[16]։

Եվ իրոք, նա, դատափետելով հայազգի եպիսկոպոսի ուղիղ հավատից շեղվելու պարագան, ավելացնում է. «...նրա եպիսկոպոսական տնօրինության տակ կան՝ ինձ անուններով հայտնի, բանիմաց, լեզուների գիտակ և իր ժողովրդի մյուս արժանիքներին ծանոթ պատկառելի այրեր»[17]։ Ինչպես երևում է առկոչված հատվածից, Բարսեղ Կեսարացին հայ եպիսկոպոսների ընտրության յուրահատուկ սկզբունք է ունեցել. լեզվական ունակություններից բացի կարևոր է համարել նաև իր ժողովրդի արժանիքներին ծանոթ լինելը։

IV դարում, եկեղեցա-դավանաբանական վեճերի առկայության պայմաններում, Բարսեղ Կեսարացու տվյալ մոտեցումը բացառիկ կարևորություն ուներ առավելապես Փոքր Հայքի համար, որը, Մեծ Հայքից կտրված լինելու պատճառով, հոգևոր կյանքին ու քաղաքական անցուդարձին հաղորդակից էր դառնում միայն եպիսկոպոսների միջոցով։

Չնայած Բարսեղ Կեսարացու խստապահանջությանը՝ Փոքր Հայքի եպիսկոպոսների մեջ գտնվեցին արիոսականության կողմնակիցներ, որոնցից մեկի բնութագիրը առկա է 377 թվականին Արևմուտքի եպիսկոպոսներին ուղղված Բարսեղ Կեսարացու թղթում[18]։ Դա Սեբաստիայի հայազգի Եվստաթիոս եպիսկոպոսն էր։

Բարսեղը գրում է. «Խնդրում ենք ձեզ հոգ տանել այդ առթիվ և, եթե հաճո է, գրեք Արևելքի բոլոր եկեղեցիներին, որ խեղաթյուրված ուսմունքը եթե ուղղվի հաղորդակցման կընդունվի, իսկ եթե ուզում են համառությամբ մնալ իրենց նորամուծությունների մեջ, ապա կառանձնացվեն եկեղեցուց»[19]։

Ինչպես երևում է նրա 372 թվականին բյուզանդական նշանավոր կառավարիչ (կոմս) Տերենտիոսին գրած մի թղթից՝ երկար ժամանակ թղթակցական կապ է պահպանել վերոնշյալ Եվստաթիոս եպիսկոպոսի հետ, ջանալով

---

15 Տե՛ս В. Великий, հատ. 6-րդ, էջ 216։

16 Հ. Մարկվարտ, Հայոց այբուբենի ծագումը և Մ. Մաշտոցի կենսագրությունը (տե՛ս Մեսրոպ Մաշտոց, հոդվածների ժողովածու, Երևան, 1962, էջ 125)։

17 В. Великий, հատ. 6, էջ 216։

18 Творения иже во святых отца нашего Василия Великого, архиепископа Кесарии Каппадокийския, часть VII. Москва, 1892, стр. 232. (Այսուհետև՝ В. Великий, հատ. VII և համապատ. էջը)։

19 В. Великий, հատ. 7, էջ 234։

նրան ուղիղ հավատի բերել։ Հայոց շրջանում եղել են այդ կապը քննադատող եպիսկոպոսներ, ուստի Բարսեղ Կեսարացին եկել է Հայաստան, Հիտաիսի գյուղում հանդիպել իրեն հիշյալ կապի համար քննադատող անձանց հետ, հավատի հարցերի շուրջ մտքեր փոխանակել և շատ խնդիրներում հստակություն մտցրել[20]։

Այնուամենայնիվ, Բարսեղ Կեսարացու թղթերից պարզվում է, որ Սեբաստիայի Եվստաթիոս եպիսկոպոսի Կեսարիայի թեմի նկատմամբ բռնած դիրքն ու հետագա գործունեությունը, ըստ էության, անհանգստացրել են Բ. Կեսարացուն, որի համար, իրավամբ, կային լուրջ պատճառներ։

Ինչպես երևում է Բ. Կեսարացու մի թղթից, IV դարի 70-ական թվականներին Փոքր Հայքում, մասնավորապես Սեբաստիայում, ընդդեմ պաշտոնական եկեղեցու, որոշակի տրամադրություն է խմորվել։ Դա անհանգստացրել է մյուս գավառների թեմերին, որոնք և անհրաժեշտ են համարել հավաքվել Նիկոպոլսում՝ խորհրդակցելու։

Բարսեղ Կեսարացին նպատակահարմար է գտնում մինչև ժողովի սկսվելը հանդիպել, իր իսկ արտահայտությամբ՝ հարգարժան Եվստաթիոս եպիսկոպոսի հետ[21]։ «Եվ աստծո բարեպաշտությամբ. գրում է նա, պարզվեց, որ մենք (իմա՝ Բ. Կեսարացին և Եվստաթիոսը) միմյանց հետ տարակարծիք չենք նույնիսկ աննշան խնդիրների մեջ»[22]։ Բայց պարզվում է, որ զրույցին ներկա է եղել նաև Սեբաստիայի երեց Պիմենը, որը և խստագույնս քննադատել, հակաճառել է Բ. Կեսարացուն[23]։

Բարսեղը ջանացել է Եվստաթիոսի և իր մեջ տարակարծությունների չգոյությունը հասու դարձնել նաև Սեբաստիայի եպիսկոպոսի հակառակորդներին, դրա համար կարևոր է համարել ունենալ գրավոր հավաստիք։ Եվ նա Բարսեղ Կեսարացու 373 թ. կազմած «Հավատո հանգանակի»[24] տակ ստորագրում է. «Ես՝ Եվստաթիոս եպիսկոպոսս, կարդալով (սույնը), քեզ՝ Բարսեղիդ, ասացի իմ կարծիքը և համաձայնվեցի վերոգրյալին...»[25]։ Սակայն, Թեոդոտ հայ եպիսկոպոսի հավաստմամբ՝ Եվստաթիոսը, Բարսեղ Կեսարացու մոտից հեռանալուց հետո, «... իր աշակերտներին հավատացնում էր, որ ինչ վերաբերում է հավատին՝ ոչ մի կետում համակարծիք չէ Բ. Կեսարացու հետ»[26]։

Եվ իրոք, Սեբաստիայի Եվստաթիոս եպիսկոպոսը իրականում սկզբունքորեն դեմ էր ուղղափառ եկեղեցու օրիենտացիային և պայքարում էր նրա դեմ։ Այդ է վկայում նրա համախոհներից վերոհիշյալ Պիմենի և Սեբաստիայի այլ երեցների բացահայտ պայքարի ելնելու նկրտումները ընդդեմ Բարսեղ Կեսարացու և նրա հովանավորած ուղղափառ եկեղեցու[27]։ Սակայն Եվստաթիոսի համար հեշտ չէր Բարսեղի դեմ պայքարելու ամբողջ ծանրությունը իր վրա վերցնել և բացահայտ դուրս գալ նրա դեմ։

---

20 Տե՛ս В. Великий, հատ. 6, էջ 213—214։
21 Տե՛ս անդ, էջ 213։
22 Տե՛ս անդ։
23 Տե՛ս անդ։
24 Տե՛ս անդ, էջ 248—253։
25 Անդ, էջ 252—253։
26 Անդ, էջ 214—215։
27 Անդ, էջ 242։

Հակառակ Եվստաթիոսի նենգամիտ մտադրություններին՝ Բ. Կեսարացին, ինչպես այդ ցույց է տալիս նրա մի թուղթը, մինչև 373 թվականը, թվում է, չնավ չի կասկածել Սեբաստիայի եպիսկոպոսի ուղղափառ եկեղեցու նկատմամբ ունեցած նվիրվածությանը։ Ավելին՝ նա ջանացել է Եվստաթիոսի միջոցով խաղաղեցնել Սոֆրոնիոսի գլխավորությամբ Սեբաստիայում խմորվող իրարանցումները, ուստի և վերջինիս գրում է. «Աղաչում եմ ձերդ գթասրտությանը ետ պահել նրան (իմա՝ Սոֆրոնիոսին) այդ արատավոր ճանապարհից, և ավելի լավ է սեփական նվիրվածությամբ միասնության ձգտել, քան թե փոխանջատվածությամբ համագործակցել նրանց հետ, ովքեր բաժանման են ձգտում»[28]։

Սակայն նույն 373 թվականին Նիկոպոլսի Թեոդոտ եպիսկոպոսին գրած մի թղթից պարզվում է բոլորովին այլ բան. Բարսեղ Կեսարացին իրականում որոշակի պատկերացում է ունեցել Եվստաթիոսի պաշտոնական եկեղեցու և իր նկատմամբ բռնած դիրքի մասին և միտումնավոր լռել է։ Դա ինքը՝ Բ. Կեսարացին, այսպես է պատճառաբանում. «Իսկ ես նրա (իմա՝ Եվստաթիոսի) իմ նկատմամբ ունեցած վերաբերմունքի մասին լռեցի ոչ թե այն բանի համար, որ նա արժանի չէր ուշադրության, այլ նրա համար, որ արդեն լուրը տարածվել էր ամենուր, ուստի և ոչ ոք իմ հաղորդման կարիքը չուներ, որպեսզի գիտենար այդ մարդու մտադրությունը»[29]։

Բարսեղ Կեսարացու վերոբերյալ թուղթը, ուր խնդրում է Սեբաստիայի եպիսկոպոսին վերջ տալ ընդհանուր միասնությանը խանգարող երեցների ներքին անհամաձայնություններին, գրված է 372 թվականի վերջերին կամ, ամենաուշը՝ 373 թ. սկզբներին. համենայն դեպս ավելի վաղ, քան այն թուղթը, որտեղ Կեսարացին այլևս չի թաքցնում իր և Եվստաթիոս եպիսկոպոսի թշնամական փոխհարաբերությունը։ Ավելին, նա նույն թղթում արդեն խոսում է հայոց եպիսկոպոսի իր դեմ ունեցած հակաճառությունների, չարախոսությունների ու զրպարտությունների մասին[30]։

Արդ՝ ո՞րն է Բարսեղ Կեսարացու նման մոտեցման պատճառը։ Բ. Կեսարացին տարիներ շարունակ աշխատել է գաղտնի պահել իր և Եվստաթիոսի անհամաձայնությունը եկեղեցու հետ կապված սկզբունքային շատ հարցերում, այնպես որ այն երբեք հասարակական քննության առարկա չդառնա։

Սեբաստիան Փոքր Հայքի ամենամեծ ու հայաշատ գավառն էր. նրա ինչ-որ խնդրի շուրջ ունեցած դիրքորոշումը վճռական կարող էր հանդիսանալ Փոքր Հայքի բոլոր գավառների համար։ Դա առավելապես որոշակի դարձավ IV դարի 60—70-ական թվականներին, երբ առաջինը Սեբաստիայում սոցիալ-տնտեսական բազայի վրա սկզբնավորվեցին բազմաթիվ աշխատավորական հուզումները։

Եվստաթիոսը և նրա կողմնակիցները ըստ էության արիոսականներ էին, որը և տանում էր դեպի պաշտոնական եկեղեցու ժխտում։ Աշխատավորական շարժումները սկզբնապես սոսկ սոցիալական հողի վրա էին և դարձյալ առաջին հերթին պաշտոնական եկեղեցու դեմ էին ուղղված։ Այս հարցում, թվում է, եկեղեցին որոշ հանցանք ուներ։ Այն բավական շուտ ընդօրինակեց ավատա-

28 Անդ, էջ 242,
29 Անդ, էջ 261։
30 Տե՛ս անդ, էջ 262։

տիրական կարգերին բնորոշ հողի մշակման վաշխառուական սիստեմը, որը և հանգեցրեց աշխատավորության շարժումներին։ Բարսեղ Կեսարացին հաղորդում է. «...որ պայման կար՝ պարտքի հատուցման դեպքում ներվում էր նրա վաշխը (տոկոսը)»[31]։ Ուրեմն՝ IV դարի Հայաստանում արդեն մշակվել էին հողօգտագործման վաշխառուական նորմեր, որոնք և հանգեցրին եկեղեցու դեմ ուղղված ընդհանուր վրդովմունքի։

Պաշտոնական եկեղեցու դեմ ուղղված պայքարում Սեբաստիայի աշխատավորական խավի և եվստաթիոսականների շահերը համընկնում էին։ Բարսեղ Կեսարացու ամբողջ մտահոգությունը այն էր, որ նշված կետում այդ երկու ուժերի միանալու դեպքում ընդհանուր եկեղեցին կտուժեր։ Ահա թե ինչու նա ջանում է Եվստաթիոսին ուղիղ հավատի բերել առանց վրդովված ամբոխի գիտության ու միջամտության։

Եվ որքան էլ Բարսեղ Կեսարացին ջանում է դանց առնել աշխատավորական հուզումների իրական փաստերը Փոքր Հայքում, այնուամենայնիվ, նրա ընդդեմ հերետիկոսների արտահայտած ցասումն ու վրդովմունքը լավագույն փաստարկն են աշխատավորական շարժումների թափի և ընդլայնվածության։ Այս առթիվ նրա արտահայտած բաղմաթիվ մտքերը ժամանակակցի հավաստի հաղորդումներ են Հայաստանի և հայերի մասին։

Բ. Կեսարացին 376 թվականին Սամոսատի Եվսեբիոս եպիսկոպոսին գրած մի թղթում արդեն խոսում է «անընդմեջ իրադարձություններին» և Սեբաստիայի հայոց երկու խմբի բաժանվելու մասին[32]։ Ինչպես հուշում է նույն թղթում արած Բարսեղի մի արտահայտությունը[33], Սեբաստիայի հայոց վրա մեծ ազդեցություն է ունեցել այլ առիթով հիշված հայազգի Թեոդոտ եպիսկոպոսը, որի մահից հետո գավառի ներքին հակասությունները պաշտոնական եկեղեցու դեմ ուղղված բացահայտ պայքարի բնույթ են կրել։

Ընդհանուր եկեղեցու դեմ պայքարի սկզբնավորման ու ընդգրկումի մասին է վկայում Բ. Կեսարացու մի այլ թուղթը՝ գրված դարձյալ 376 թվականին, ուր ասված է. «Արդեն տասներեքերորդ տարին է, ինչ անհավատները (հերետիկոսները) մեր դեմ հալածանք են սկսել, որի ընթացքում եկեղեցիներին ավելի շատ վիշտ է պատճառվել, քան այն ժամանակվանից ի վեր, ինչ բարձրացվում է Քրիստոսի Ավետարանը»[34]։

Արդ՝ Բարսեղ Կեսարացու՝ այդ շարժումների ժամանակակցի ու ականատեսի վկայությամբ, 363 թվականից սկսած, սոցիալ-տնտեսական հողի վրա առաջացած և կրոնական երանգավորում ունեցող շարժումները արդեն զգացնել էին տալիս իրենց գոյությունը։

IV դարի 70-ական թվականներին, հակառակ եկեղեցու պաշտոնական անձանց սպասումներին, ընդհանուր եկեղեցու դեմ գոյություն ունեցող բոլոր դժգոհությունները դումարվում են «անհավատների շարժում» անվանման տակ, և սկսվում է եկեղեցիների անկման մի աննախադեպ ժամանակաշրջան։ Ահա թե ինչպես է բնութագրվում այն Բ. Կեսարացու կողմից. «Հափշտակված են

31 Անդ, էջ 228։

32 Տե՛ս В. Великий, հատ. 7, էջ 165։

33 Խոսելով Սեբաստիայի որոշ մասի բացահայտ հակաբարսեղյան դիրքորոշման մասին՝ ավելացնում է. «որովհետև երանելի Թեոդոտը այլևս չկա...» (տե՛ս В. Великий, հատ. 7, էջ 166)։

34 Անդ, էջ 176։

ուրախությունն և հոգևոր խնդությունը, ողբի են վերածվել մեր տոները, փակված են աղոթատները, եկեղեցու բեմում չի կատարվում հոգևոր ծառայությունը, վերացան քրիստոնեական ժողովները, ուսուցիչները չեն տնօրինում, չկան փրկարար խրատներ, ոչ հանդեսներ, ոչ երեկոյան ժամասացություն, ոչ այն երանելի ուրախությունը, որին եկեղեցական հավաքույթներում հանձնվում են աստծուն հավատացող հոգիները...»[35]։

Թղթում ամենայն մանրամասնությամբ խոսվում է «Արևելքի խեղճության», «հովիվներին քշելու», «հոտը ցրելու» և այլնի մասին[36]։ Այս ամենով հանդերձ, ինչպես հուշում է Ի. Կեսարացու՝ Սեբաստիայի հայոց երկու մասի բաժանվելու և պաշտոնական եկեղեցու դեմ պայքարի ելնելու թուղթը, վկայակոչված հատվածում և ամբողջ թղթում հիմնականում խոսվում է Սեբաստիայում ծավալված շարժումների պատճառած ավերածությունների և շարժման մասնակիցների նոր սպառնալիքների մասին։ Դրա ծանրությունը ամենից հրստակ պատկերացնում է Բարսեղ Կեսարացին, ուստի և ինքն էլ օգնություն է խնդրում իտալական և գաղղիական եպիսկոպոսներից[37]։

Բարսեղ Կեսարացին այլոց օգնությանը գիմելով հանդերձ՝ Սեբաստիայի շարժումների դեմ առաջինը ինքը պայքարի ելավ։ Նա Փոքր Հայքի այլ գավառների եկեղեցիներին, նշանավոր երեցներին հղած թղթերով ջանում է մեկնաբանել կործանարար շարժման հետևանքները, պաշտոնական եկեղեցու դեմ կատարած նրա հանցանքը, դրանով իսկ աշխատելով խոչընդոտել շարժումների շարունակվող վտանգավոր ընդարձակումները[38]։

Սեբաստիայում բռնկած շարժումն ինքնին Փոքր Հայքի անջատումից բացի կարող էր լուրջ վտանգ ներկայացնել Կեսարիայի թեմի մեծ հեղինակությանն ու ընդհուպ գոյությանը։ Դրա երաշխիքը կարճ ժամանակում շարժման մասնակիցների ձեռք բերած բացառիկ հաջողություններն են։ «Անհավատների իշխանության տակ են գտնվում մկրտությունը, հանգուցյալների հուղարկավորումը, այցելությունը հիվանդներին, վշտացյալների հանգստացումը, օգնությունը կեղեքվածներին, բոլոր տեսակի նպաստները, խորհուրդների հաղորդակցությունը»[39]։ Փաստորեն եկեղեցու ժողովրդի հետ ունեցած ամենակարևոր դերն ու մշտական կապի միջոցները անցել էին շարժման մասնակիցների ձեռքը, որով նրանք արդեն հնարավորություն ունեին ազդելու և իրենց շահերին ծառայեցնելու աշխատավորական այն մասին, որը չէր հարել շարժմանը և մնում է եկեղեցու շահերի պաշտպան։

Բարսեղ Կեսարացու թղթերում հետաքրքիր մանրամասներ են պահպանվել Սեբաստիայի հայոց սոցիալական շարժումների, նրանց որոշակի հաջողության և ըստ այդմ էլ եկեղեցուն թելադրած իրենց գաղափարախոսության մասին[40]։

Բարսեղ Կեսարացու որոշ թղթեր պատմական Հայաստանի սոցիալ-տրնտեսական կյանքի, արտադրական հարաբերությունների ու քաղաքական իրա-

---

35 Անդ, էջ 179։ (Հմմտ. Լ. Խաչիկյան, Փոքր Հայքի սոցիալական շարժումների պատմությունից, Երևան, 1951, էջ 36)։

36 Տե՛ս անդ, էջ 177—182։

37 Տե՛ս անդ, էջ 180։

38 Տե՛ս անդ, էջ 167—168, 171—174։

39 В. Великий, հատ. 7, էջ 182։ (Հմմտ. Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 37)։

40 Տե՛ս անդ, էջ 190, 198, 238 և այլն։

վիճակի ուսումնասիրման իմաստով ուսանելի շատ բան ունեն։ Այսպես, օրինակ, Հայաստանում ավատատիրական հարաբերությունների սկզբնավորման ու վաղ շրջանի առանձնահատկությունների ուսումնասիրման տեսակետից շատ արժեքավոր են Բարսեղի այս կամ այն առիթով արած դիտողությունները Հայաստանում գոյություն ունեցող հողօգտագործման սիստեմին, վաշխառուական հարաբերությունների սկզբնավորմանն ու ընթացքին վերաբերող, որոնց մասին մեր դասական շրջանի մատենագրությունը գրեթե ոչինչ չի ասում։

Բարսեղ Կեսարացու՝ Փոքր Հայքի եպիսկոպոսներին հղած թղթերը կամ հայոց եկեղեցու ու կյանքին վերաբերող խնդիրներ պարունակող այլոց ուղղված թղթակցությունները շատ հաճախ կարևոր տեղեկություններ են ունենում ոչ միայն քննվող, այլև հարակից խնդիրների շուրջ։ Այսպես, օրինակ, Բարսեղ Կեսարացու՝ հիշյալ Տիրենտիոս կուսակալին 372 թվականին գրած թուղթը կարևոր է նաև այլ առումով։ Նրանում ասված է. «Եվ հիմա, իրերի այսպիսի իրավիճակում հասնելով մինչև Սատաղ, աստծո բարեհաճությամբ, թվում է. կարգավորեցի ամբողջ մնացյալը, հաշտեցրի հայոց եպիսկոպոսներին և զրուցեցի նրանց հետ... իսկ ինչ վերաբերում է այն բանին, որ Հայաստանում այսպիսի անփութությամբ խախտվում են օրենքները, ապա ես նրանց տվեցի կանոններ՝ նրանցով ինչպես հարկն է գործի դնելու իրենց հոգացողությունը»[41]։

Նախ՝ ի՞նչ հողի վրա կարող էր այնպիսի լուրջ բնույթ ստանալ հայ եպիսկոպոսների վեճը, որ Բարսեղ Կեսարացին ստիպված է եղել անձամբ միջամտել գործին։ Այս իմաստով IV դարի Հայաստանում և ընդհանրապես Արևելքում պարարտ հող կար. աղանդավորական բազմաթիվ շարժումները, քրիստոնեության հաղթական տարածման շուրջ ծավալվող թեր և դեմ կողմերը, նորաստեղծ եկեղեցու համակիր և ընդդիմակալ խմբերը անսպառ աղբյուր էին հարատև վեճերի։

Երկրի ինքնությունը խաթարող նման պայմաններում ինքնին հասկանալի է Բարսեղ Կեսարացու «հայոց եպիսկոպոսներին հաշտեցնելու» կարևորությունը

Հետաքրքիր է նրա 375 թվականին հայ եպիսկոպոսին գրած մի թուղթը, ուր կարդում ենք. «Սպասեցեք ինձ, եթե աստված բարեհաճի, կգամ ձեզ մոտ, խորհուրդ կտամ այն ամենի շուրջ, ինչի մասին Ձերդ մեծությանը հնարավոր չէր գրել թղթում և, բոլոր դեպքերում, կաշխատեմ ձեզ պարգևել անհրաժեշտ խաղաղություն»[42]։ Կամ՝ Անտիոքի Սելիտոս եպիսկոպոսին ուղղված մի թղթում, որին կանդրադառնանք այլ առիթով, հիշեցնում է, որ ոմն Փավստոսի ձեռնադրության հետ կապված անախորժության համար իրեն չշարախոսեն, որ դրանում ինքը հանցանք չունի[43]։ Այս և նախորդ փաստարկներն ինքնին վկայություն են ժամանակին նրա դեմ խմորված հայ (և ոչ միայն հայ) վանական մտքի որոշ խավը ըմբոստացման։ Դա առավելապես պետք է վերագրել հայ վանականության որոշ խմբի ասորական թեքմանն ու հակումներին։

Փոքր Հայքը հոգևոր խոշոր կենտրոններից հեռու և կտրված լինելու պատճառով փաստորեն անհաղորդ էր արտաքին աղանդավորական շատ խմորումների։ Բայց հայոց հետ կապված յուրաքանչյուր խնդիր, նրանց հավատի միասնությունը դիմակայող ամեն մի միջադեպ հասու էր հայերին՝ շնորհիվ Բար-

41 В. Великий, հատ. 6, էջ 216։
42 В. Великий, հատ. 7, էջ 139—140։
43 В. Великий, հատ. 6, էջ 244։

սեղի հայոց եպիսկոպոսների հետ ունեցած թղթակցության։ Ինչպես երևում է նրա թղթերից, Բ. Կեսարացու մտահոգությունը առավել ընդգծված ու բացահայտ է, երբ խոսքը եկեղեցական անախորժ վեճերի, ընդհանուր թշնամուն դիմակայելու մասին է։ Այսպես, օրինակ, նրա 375 թվականին հայերին գրած թղթերից մեկում ասված է. «Դուք, ապրելով Հայքի ծայրամասում, բնականաբար անհաղորդ եք բաղում շարժումներին։ Իսկ մենք, որ մասնակիցն ենք գործի բուն իսկ ընթացքին, բաղում տեղերից ամեն օր լուրեր ենք ստանում կործանվող եկեղեցիների մասին ու մեծ անհանգստություն ենք ապրում՝ չլինի թե ընդհանուր թշնամին, նախանձելով հարատև խաղաղությանը, ձեր կողմերում էլ իր որոմի հունդերը ցանի, և Հայաստանի մի մասը անցնի թշնամիների ձեռքը»[44]։

Բարսեղ Կեսարացու որոշ թղթեր արտաքուստ որքան էլ անմեղ տեսք ու կրոնական բովանդակություն ունենան, այդուամենայնիվ, նրանցում առկա են ժամանակի քաղաքական իրավիճակը, մասնավորապես Փոքր Հայքի սոցիալտնտեսական, քաղաքական հարաբերություններին առնչվող զանազան կողմեր։ Այս իմաստով կարևոր է նրա 373 թվականին Փոքր Հայքի գավառներից մեկի՝ Նիկոպոլսի, Թեոդոտ եպիսկոպոսին գրած մի թղթի հետևյալ հաղորդումը. «Ի դեպ, Փավստոսը եկավ ինձ մոտ՝ Պապի թղթով և կամենում էր եպիսկոպոս ձեռնադրվել։ Բայց երբ ես քո և մյուս եպիսկոպոսների բարեպաշտության հավաստիք պահանջեցի՝ արհամարհեց ինձ, գնաց Անթիմոսի մոտ և, առանց ինձ տեղյակ պահելու, ձեռնադրվեց նրանից»[45]։

Ա. Սուքրյանը մի առիթով նկատել է. «Իսկ այն անձն ուսկից թուղթ ունէր Փաւստոս, Սուրբ Բարսղի թուղթն կը կոչէ զնա պապա (παπα), որ նոյնանիշ է մեր Հայր բառին...»[46]։ Ի հաստատումն ասվածի՝ ուսումնասիրողը վկայակոչում է Փ. Բուզանդի հաղորդումը հայոց մեջ հնում հայր-մարդապետների գոյության մասին[47]։

Հայ արքունիքում, հարկավ, մարդապետ-ներքինապետների երբեմնի գոյությունը անժխտելի է, որոնց անվանը հարակից էր «Հայր» տիտղոսը։ Ա. Սուքրյանը այս տիտղոսը առանց երկմտելու նույնացնում է Բարսեղ Կեսարացու բննվող թղթում հիշված «Պապա» (Παπα) անձնանվան հետ, որը, ինչպես կտեսնենք, համոզիչ չէ։

Խնդրին առնչվում է բանասեր Հ. Թորոսյանի այն դիտողությունը, թե «Ոմանք այդ Παπα բառը յատուկ անուն առնելով՝ կը հասկնան Պապ իշխան մը, և ո՞վ կրնար ըլլալ այդ անձը՝ եթե ոչ մեր Արշակ Բ-ի որդին և գահաժառանգը...»[48]։

Որ Բարսեղ Կեսարացու թղթում հիշատակված «Պապը» նույն հայոց Պապ թագավորն է, հստակ երևում է նրա իր գահակալության տարիներին Հայաստանում ծավալած գործունեությունից և որոշակի նպատակով հայոց եկեղեցու գործերին միջամտելու փաստից։

---

[44] В. Великий, հատ. 7, էջ 141։
[45] В. Великий, հատ. 6, էջ 245։
[46] Ա. Սուքրեան, Մեծն Ներսէս Պարթեւ (տե՛ս «Բազմավէպ», 1877, հատոր Լե, էջ 331)։
[47] Տե՛ս անդ։
[48] Յ. Թորոսեան, Հ. Սրսէն Սուքրի (տե՛ս «Բազմավէպ», 1932, № 8—9, էջ 353)։

Արդ, այդպես ընդունելու դեպքում, Հայոց Պապ թագավորը եպիսկոպոսության իր նախընտրած թեկնածուն է առաջադրում, որը և Բ. Կեսարացու կողմից մերժվում է։

Խնդրին առնչվում է Բարսեղի 373 թվականին գրած վերոհիշյալ թուղթը՝ ուղղված Անտիոքի Մելիտոս եպիսկոպոսին, ուր ասված է. «Կամենում եմ ձերդ բարեպաշտությանը հաղորդել, որ Պապի կողմից ուղարկված Փավստոսը Անթիմոս եղբոր կողմից ձեռնադրվել է եպիսկոպոս, պատվական Կյուրեղ եղբոր փոխարեն, առանց իմ համաձայնության, որից և Հայաստանը լցվեց խռովությամբ»[49]։

Հայտնի է, որ Պապը սկզբունքորեն դեմ էր Հայոց Հայրապետի՝ Ներսեսի, վարած հոգևոր գործունեությանը։ Բայց վերջինիս վայելած մեծ ժողովրդայնությունը թագավորին թույլ չէր տալիս բացահայտ պայքարելու նրա դեմ։ Ուստի և Պապը որոշեց առաջինը վերջ տալ Ներսեսի կյանքին[50]։

Որ Ներսեսի կենդանության օրոք Պապը իրոք չէր կարող հասնել իր որոշակի ծրագրին, դա երևում է նրա այն ավերածություններից, որ կատարեց Ներսեսի մահվանից հետո. «...սկսավ հրաման տալ յայտնապէս յաշխարհին աւերել զայրենոցսն և զորբանոցսն՝ զոր շինեալ էր Ներսէս ի գաւառս գաւառս, և աւերել զկուսաստանսն...»[51]։

Ներսեսի հաջորդը՝ Հուսիկը, այսպես ասած, աննկատ անձնավորություն էր. «Եւ սա քրիստոնեայ, բայց համարձակութեամբ յանդիմանութեամբ ինչ ընդ ումեք չիշխէր բարբառել. կամ զի երկնչոտ էր և հաւան, և ըստ կամաց թագաւորին միայն ունէր զպատիւն...»[52]։ Պապ թագավորը իր նպատակին հասնելու և անարգել գործելու համար հոգևոր դասի պատասխանատու անձանց փոխարինում է յուրայիններով։ Հենց դա էլ վրդովմունք է առաջացնում Հայաստանում։ Այս հանգամանքը հայ սկզբնաղբյուրներից բացի հաստատվում է նաև Բարսեղ Կեսարացու վերոնշյալ թղթով։ Վկայակոչված հատվածի՝ «որից և Հայաստանը լցվեց խռովությամբ» միտքը վերաբերում է Պապի կամակատար եպիսկոպոսների ըմահաճ գործունեությանը, որոնք թագավորի խորհրդով պայքարում էին Ներսեսի ձեռնարկումների և Բ. Կեսարացու թեմի դեմ։ Իրականում խուլ պայքար է եղել Հայոց Պապ թագավորի և Կապադովկյան Կեսարիայի հոգևոր թեմի առաջնորդ Բարսեղ Կեսարացու միջև՝ հայկական հողի վրա, Հայոց եկեղեցուն և պետականությանը առնչող խնդիրների շուրջ։

Բարսեղի Հայոց եպիսկոպոսներին ուղղված թղթերում պարզորոշ երևում է հեղինակի Հայոց հետ ունեցած ջանադիր աշխատանքը, նրա արգասավոր ու վճռական նշանակություն ունեցող կողմերը։

Երբեմն, այս կամ այն խճճված խնդրի առիթով, Բարսեղ Կեսարացին դժվարացել է գտնել վերջնական ու ճիշտ լուծում, տալ, այսպես ասած, անշահախնդիր ու անկողմնակալ խորհուրդ։ Այս կարգի խնդիրներում առավել մեծ է Բարսեղի մտահոգությունը, Փոքր Հայքի եպիսկոպոսների հետ խորհրդակ-

[49] В. Великий, հատ. 6, էջ 244։ Ի դեպ, Մ. Չամչյանը ենթադրում է, որ այս Փավստոսը նույն մեր մատենագիր Փավստոս Բուզանդն է։ Այս ենթադրությունը անհավանական է թվում, որովհետև Բուզանդի «Պատմության» մեջ Բ. Կեսարացին բացառիկ հարգված ու իմաստուն եկեղեցի գործիչ է ներկայացված (տե՛ս Փ. Բուզանդ, նշվ. աշխ., էջ 82, 103—109), Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, Ա հատ., Վենետիկ, 1784, էջ 447—448։

[50] Տե՛ս Փ. Բուզանդ, նշվ. աշխ., էջ 221։

[51] Անդ, էջ 232։

[52] Անդ, էջ 231։

ցելու անհրաժեշտությունը։ Եվ երբեմն, ինչպես պետք է եզրակացնել առանձին թղթերից, նա խորհրդակցել է նույնիսկ հայոց կյանքի ու մշակույթի հետ շաղկապվող անձանց հետ՝ հարցի ճիշտ լուծումը գտնելու ազնիվ նպատակադրումով։

Ահա թե Ինչու Բարսեղը, իրեն նմանեցնելով ալեկոծ ծովում խարխափող նավորդի՝ հեռու ափերում ցոլացող ջահի հետ է համեմատում Սամոսատի Եվսեբիոս եպիսկոպոսից ստացած թուղթը[53]։

Այսպիսով, Բարսեղ Կեսարացու հոգևոր իրավասության տակ էին գտնվում Փոքր Հայքի Սեբաստիա, Նիկոպոլիս, Սատաղ և «Դաղութք հայոց» հայաբնակ կենտրոնները, որոնց հետ առնչվող յուրաքանչյուր խնդիր IV դարի 70—80-ական թվականներին անկարող էր վճռվել առանց Բարսեղ Կեսարացու անմիջական միջամտության։

Բարսեղ Կեսարացու այդ տասնամյա գործունեության ժամանակաշրջանում վերջնականապես ձևավորվեցին ու ամրապնդվեցին հայ-հունական եկեղեցական, ինչպես նաև մատենագրական փոխառնչությունները, որոնք հոգևոր խնդիրների բնագավառում գոյատևեցին Բարսեղի մահվանից հետո էլ մոտ ութ տասնամյակ ևս, իսկ մշակութային փոխազդեցություններն ու ընդհանրությունները՝ մինչև միջնադար։

Բ. Կեսարացու Փոքր Հայքի հայերին, եկեղեցական նշանավոր անձանց գրած թղթերում, հայազգի եպիսկոպոսների զանազան հարցումներին տված պատասխան-լուծումներում պարզորոշ երևում են ժամանակի հայոց եկեղեցու սկզբնավորման հետ կապված առանձնահատկությունները, ներքին հակասություններն ու դրա հետ կապված բարդությունները։

Եկեղեցական պատմության շատ նշանավոր ուսումնասիրողներ զանազան իրարամերժ կարծիքներ են հայտնել հայ վանականության ծագման ու վերջնական ձևավորման մասին[54]։ Բարսեղ Կեսարացու Փոքր Հայքին վերաբերող թղթերն իրենց հավաստի մանրամասներով ինքնին լրացնում են այդ իմաստով հայ դասական շրջանի մատենագրության թերին և հնարավորություն ընձեռում ասելու, որ. «Աւելորդ է ոմանց պնդելն թէ Հայք ոչ ընդունէին զձեռնադրութիւն ի Կեսարիոյ, այսինքն Հայ կաթողիկոսունք. այլ յայտնի նոյն իսկ մերքս կ՚ըսեն թէ «՝ի Լուսաւորչէն մինչև՝ ի Սահակ հայրապետն՝ ՝ի Կեսարիայ ձեռնադրէին Կաթողիկոսունք. յորժամ եղև ժողով Քաղկեդոնի՝ բաժանեցան Հայք ՝ի Յունաց»[55]։

---

53 Տե՛ս В. Великий, հատ. 6, էջ 217։

54 Տե՛ս Յ. Թոփճեան, Ծագումն հայ վանականութեան («Լոյս», 1905, N 15, էջ 360—361)։

55 Ա. Սուքրէան, Մեծն Ներսէս Պարթեւ (տե՛ս «Բազմավէպ», հատոր Լե, Վենետիկ, 1877, էջ 322)։